ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Փաշինյան,

Տեղեկացնում ենք, որ Սահմանադրական դատարանը 2019 թվականի հուլիսի 9-ի նիստերում քննության է առել «2019 թվականի հունվարի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», «2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» երրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», «2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», «2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտան-

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 007/48004
«12» 07 2019 թ.

0019, Երևան, Բաղրամյան 10, հեռ. (374.10) 52 67 64 (ֆաքս), E-mail: armlaw@concourt.am

գության մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», «2018 թվականի ապրիլի 5-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Երուսաղեմի Սբ. Հովհաննեսի, Հռոդոսի և Մալթայի ինքնիշխան մարտական բարեխնամ ուխտի միջև համագործակցության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», «2018 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «2018 թվականի մարտի 14-ին Կոպենհագենում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը:

Ձեզ են ուղարկվում Սահմանադրական դատարանի 09.07.2019 թ. ՍԴՈ-1468, ՍԴՈ-1469, ՍԴՈ-1470, ՍԴՈ-1471, ՍԴՈ-1472, ՍԴՈ-1473, ՍԴՈ-1474 որոշումների պատճենները:

Առդիր՝ 28 թերթ:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 հուլիսի 2019 թվականի
ՍԴՆ- 112

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 9 հուլիսի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ

արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը

ՊԱՐԶԵՑ.

1. «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում:

2002 թվականի հոկտեմբերի 7-ի ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագիրը (Համաձայնագիր) վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից Ազգային ժողովի 2003 թվականի սեպտեմբերի 10-ի Ն-020-3 որոշմամբ:

2. Արձանագրությամբ Համաձայնագրի, մասնավորապես, 1-ին հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունները շարադրվում են նոր խմբագրությամբ, հիշյալ հոդվածը լրացվում է 18-րդ պարբերությամբ, 11-րդ հոդվածը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչպես նաև 1-ին, 23, 24, 27-33-րդ հոդվածներում «Լիազոր ներկայացուցիչ» բառերը փոխարինվում են «Մշտական ներկայացուցիչ» բառերով:

3. Արձանագրությամբ Համաձայնագրում կատարվող փոփոխություններով՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է պարտավորություններ, մասնավորապես.

- Կազմակերպությանն առընթեր մշտական և լիազոր ներկայացուցիչը (Մշտական ներկայացուցիչ) Կազմակերպության անդամ պետության կողմից իր ազգային օրենսդրությանը համապատասխան նշանակվող ներկայացուցիչն է, որն ուղարկող պետության կողմից օժտվում է լիազորություններով՝ Կազմակերպության հարցերով գործունեության և Կազմակերպության կանոնադրության IV գլխին համապատասխան հիմնադրված Մշտական խորհրդում աշխատանքի համար,

- Գլխավոր քարտուղարի տեղակալը Կազմակերպության բարձրագույն վարչական պաշտոնատար անձի տեղակալն է, պաշտոնատար անձ է Քարտուղարությունում այն պաշտոնների՝ յուրաքանչյուր անդամ պետության համար ամրագրված քվոտաներին համապատասխան սահմանված կարգով հաստատվող անձանց թվից, որոնց ցանկը սահմանում է Խորհուրդը,

- եթե Գլխավոր քարտուղարը, Գլխավոր քարտուղարի տեղակալները, նրանց ընտանիքների՝ իրենց հետ ապրող անդամները, գտնվելու վայրի պետության քաղաքացիներ չեն, արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվում են այնքան, որքան «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով նախատեսված է դիվանագիտական գործակալի և նրա ընտանիքի անդամների համար:

4. Արձանագրությունով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են բարձրացնելու Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության գործունեության արդյունավետությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՈՐՈՇԵՑ.

1. 2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի
ՍԴՈ-1470